ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ

# ԱՐՇԱԼՈՅՍ

ՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԸՆԴՈՒՆՒՈՒՄ ԵՆ ԱՄԵՆ ԼԵԶՈՒՈՎ

Առաջին երեսում տողը (petite) 6 շահի
Վերջին ,, ,, ,, 3 շահի

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է
Թաւրիզում ամիսը 1,50
Գաւառներում ,, 2 ղր.

ԱՌԱՆՁԻՆ ՀԱՄԱՐԸ ԱՐԺԷ 10 ՇԱՀԻ

Հասցէն՝ Redaction „Archalousse" Tauris (Perse) | اداره روزنامه «آرشالوس» تبریز

Խմբագրութեան հետ գործ ունեցողները դիմեն Հայկ Խախանեանին

Բ. ՏԱՐԻ № 20 ԿԻՐԱԿԻ 11 (24) ՕԳՈՍՏՈՍԻ 1919 Թ. Բ. ՏԱՐԻ

## ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

### ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ՄՏԱՅՆՈՒԹԵԱՆ ՏԷՐՈՒՆՆԵՐԸ

Մարդկային հասարակութեան երկու ակնբախ և հակամէտ շերտաւորումների՝ 1) աշխատաւոր և իր սեպհական աշխատանքով ապրող, կեղեքուող և 2) անգործունեայ, առաջինների աշխատանքի քրտինքով ապրող և նրանց կեղեքող ու զրկող բուրժուա-կապիտալիստ դասակարգերի՝ փոխ-յարաբերութիւնները երբ աչքի ենք անցնում ամբողջ պատմութեան ընթացքում, տեսնում ենք, որ մարդկային մտքի յառաջադիմութեան, ինքնագիտակցութեան և նորանոր նուաճումների հետ զուգընթաց՝ դասակարգը իր գիտակցութեան չափանիշի և աստիճանի համեմատ զգում է, թէ ինչ դիրք պիտի բռնի և ինչ վերաբերմունք ցոյց տայ դէպի հակառակորդ՝ իրեն կեղեքող՝ դասը։ Եւ որքան միտքն աւելի է յառաջադիմում՝ այնքան այդ գիտակցութիւնն աւելի է խորանում և հետեւապէս երկու դասերի մէջ եղած շահերի անջրպետը աւելի ակնյայտնի և հասկանալի է դառնում։

Կուլտուրապէս յետամնաց երկրներում դասակարգային գիտակցութիւնն աւելի ցած աստիճանի վրայ է գտնւում։ Հետեւապէս աշխատաւոր մասսան, որ աւելի քիչ հնարաւորութիւն ունի կրթութիւն ստանալու՝ քան հարուստ դասը, ապրելով կուլտուրապէս յետամնաց միջավայրում, նրա համար դասակարգային շահերի ըմբռնողութիւնը աւելի մութն է։ Նա կարծում է, որ ինքը ստեղծուած է աշխատելու և չարչարուելու համար, իսկ իր արիւն քրտնքի աշխատանքի վայելումը վերապահուած է տէրերին, որոնց ձեռքի տակ գործում է։ Ամեն բան պիտի կատարուի տիրոջ կամքով և այնպէս, որ հաճելի լինի տիրոջը։ Միւս կողմից «տէրերն» էլ աշխատում են որքան կարելի է խաւարի և տգիտութեան մէջ պահել իրենց կթան կովերին, աշխատաւորութեան, որպէս զի վերջինս հնարաւորութիւն չունենայ գիտակցելու իր իրաւունքներն ու շահերը։

Սակայն ժամանակի ընթացքում քաղաքակրթութեան նորանոր նուաճումները գալիս են տակաւ առ տակաւ խորտակելու այդ տգիտութեան պարիսպները՝ տգիտութեան մէջ խարխափողներին գիտակցութեան բերելու։ Դրանց հետ միասին «տէրային» մտայնութիւնը տեղի է տալիս և տգէտ մասսան, որ սովոր էր քծնելու և ամեն կերպ իր ոչխարային վարմունքով հաճոյ երեւալու «տէրերի» աչքին՝ անզուլ և յամառ ու անհաշտ պայքարի փողն է հնչեցնում։ Դա մի մեծ ֆակտոր է ինքնագիտակցութեան և ինքնաճանաչումի։ Այդ դէպքերում դասակարգային պայքարի հիմքն է դրւում։

Թարմ ու յեղափոխական հոսանքները ոյժ ու կորով են ներշնչում այդ կռիւը վարողներին և արդարութիւնն ու իրաւունքը իրենց կամքին ու քմահաճոյքներին ենթարկողներին իրենց կարգերի հետ գահավէժ տապալում։

Ինտելիգենցիան մի երկրի այն յառաջապահն է, որ առաջնորդում է տգէտ մասսային դէպի գիտակցութիւն և լոյս։ Ուրեմն և ինտելիգենցիան հանդիսանում է աւելի քան բանական և լուսաւոր տարր։ Ինտելիգենտ անհատը, ուրիշ բարեմասնութիւնների և լաւ յատկանիշների հետ, պիտի ունենայ նաև անկախ կամք և յօրեղ անհատականութիւն։ Քծնելն ու շողոմ վարմունքը նրանից հեռու պիտի լինեն։ Ի հարկէ մեր խօսքը վերաբերում է աշխատաւոր ինտելիգենցիային՝ և ոչ թէ բուրժուա ինտելիգենցիային, որովհետև վերջինս ինտելիգենցիայի այլասերուած մի հատուածն է։

Խօսքը մասնաւորեցնելով մեր շրջապատի մասին, ցաւօք սրտի պէտք է արձանագրենք, որ մեր ինտելիգենտ կոչւող շատ անձնաւորութիւններ և հերիք չէ այդ, այլ իրենց սոցիալիստ անւանող և պրոլետարիատի անունից ու շահերից յոկ ճառող մի քանի խեղկատակներ հերիք չէ քծնելով և խունկ ծխելով մեր չարչի բուրժուազիային, ժողովների մէջ բարձրագոչ և հպարտ կերպով նոցա թեկնածութիւնն առաջարկելու և անցկացնելու բուռն ցանկութիւն ունին։ Նոքա կարծում են, որ դեռ ես կարող են աշխատաւոր մարդկանց այդ միջոցով պատկառանք և վախ ազդել, որպէս զի վերջինները բուրժուաներին և «տէրերին» ձայն տան։ Էլ չգիտեն դատարկգլուխ բուրժուական մտայնութեան խնկարկուները, որ անցե՜լ է այն ժամանակը, երբ այդ միջոցներով աշխատում էին աշխատաւորութեան վախեցնել, որպէս զի վերջինս իր քուէն հարուստներին տայ։ Մեր հասարակութիւնը այժմ աւելի քան գիտակից է, և իր վերջին ընտրութեամբ եկաւ ապացուցելու, որ իր ձայնը չի տայ բուրժուական մտայնութեան տէրուններին, որոնք անամօթաբար և անպատկառօրէն սոցիալիզմից ճառել գիտեն միայն, իսկ գործնականում ցուցադրում են միմիայն ոչնչութիւն։ Այդպիսիներին, մեր հասարակութիւնը արժանի պատասխը գիտէ հասցնել։

Բուրժուազիայի լծերի տակ ապրողներ, ձեզ այլեւս փրկութիւն և հնար չկայ այդ տղմից ազատուելու։

## ՄԵՐ ՕՐԻԷՆՏԱՑԻԱՆ

Այսօր բոլոր ազգերը իրենց հայեացքները ուղղել են Պարիզ, այնտեղից սպասելով իրենց փրկութիւնը, իրենց «բաժինը». բոլոր բուրժուական, ինչպէս և մանր բուրժուական կուսակցութիւնները առանց աչքի առաջ ունենալու վաղուան օրը, այսօր խունկ են ծխում իմպերիալիստների «արդարադատ» աշխատանքներին. բուրժուական մտածելակերպ ունեցող մարդիկ չեն կարողանում հաշտուել այն մտքի հետ, որ այդ բոլոր սպասումները, ակնկալութիւնները ցնորամիտ երազներ են, ինքնախաբէութիւններ. այդ հանգամանքը ստիպում է նրանց միշտ ջղային դրութեան մէջ մնալ և միշտ կասկածոտ հայեացքով նայել իրենց հարեւանների վրայ. մանր իմպերիալիստական կառավարութիւնները հարազատ զաւակներն են մեծ իմպերիալիստների, թէպէտ վերջացել է համաշխարհային պատերազմը, սակայն նա շարունակում է իր աւերիչ գործունէութիւնը աշխարհի բոլոր անկիւններում։

Սակայն կանաչ սեղանների շուրջը նստածները, կաբինէտների գիտնականները կարծում են, որ այս դրութիւնը այսպէս յաւերժ պիտի շարունակուի. նրանք աչքաթող են անում այն հանգամանքը, որ ժամէ ժամ, րոպէ առ րոպէ կորցնում են իրենց տակի հողը. յեղափոխական աշխատաւորութիւնը լուռ հանդիսատես լինել չի կարող. վաղուց լցուել է նրա համբերութեան բաժակը. աշխարհի ամբողջ դաւանութիւնները, զրկանքները նա տանում է. նա պատրաստ է, սակայն սպասում է ողբերգութեան վերջին տեսարաններին։

Վաղուան օրը մերն է. վաղը, այդ սրբազան ժամանակը բոլոր յեղափոխական-սոցիալիստական (առանց չակերտների) կուսակցութիւնների յաղթանակի օրն է։

Այսօր իմպերիալիստները նոր քարտէզներ են գծում, որ իրենց ձգտումներին յագուրդ

